



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԼՈՍ ԱՆՃԵԼՆՍԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԵԴՐՈՆԸ ՕՐՀՆԵԼՈՎ

### **ՊԱՅՊԱՆԵՆՔ ՈՒ ՀԶՕՐԱՑՆԵՆՔ ԱԶԱՏ, ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՊԱՅՔԱՐԻՆՔ Ի ԽՆԴԻՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ**

*ՊԱՏԳԱՄԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ*

Լոս Անճելլոսի Իրանահայ Միութիւնը Երեքշաբթի, 18 Հոկտեմբերի երեկոյեան, իր նորակառոյց կեդրոնին մէջ իւրայատուկ ոճով պատուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, գեղարուստական գեղեցիկ հանդեսով մը հիւրընկալելով Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին գահակալը:

Միութիւնը փափաք յայտնած էր իր նոր կեդրոնի յարկին տակ ընդունելու Վեհափառ Հայրապետին այցելութիւնը. փափաքը թեմիս բարեխնամ Առաջնորդին կողմէ փոխանցուած էր Հայրապետին, որ ընդառաջեց խնդրանքին ու պատմական հանդիպում մը ունեցաւ միութեան պատասխանատուներուն, անդամներուն ու սրահը լեցուցած աւելի քան 500 հայորդիներուն հետ:

Առաջնորդ Սրբազանին ուղեկցութեամբ, Վեհափառ Հայրապետը կեդրոն հասաւ ժամը 6:30ին եւ դիմաւորուեցաւ միութեան պատասխանատուներուն ու ներկայացուցչական դէմքերու կողմէ: Ներկայ էին հոգեւոր հայրեր, Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու թեմիս ժողովականութեան անդամներ, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի, Ազգ. Առաջնորդարանի յանձնախումբերու, Տիկնանց Օժանդակ Մարմինի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան, ինչպէս նաեւ Կլենտէյլ քաղաքի պետական ներկայացուցիչներ:

Կեդրոնի մուտքին, երկու պարմանուիիներ ընդառաջ եկան Վեհափառ Հայրապետին, իրենց ձեռքին՝ աղ ու հաց. Վեհափառը կատարեց տնօրինէքի աւանդական արարողութիւնը:

Սրահ մուտքին, Վեհափառ Հայրապետն ու շքախումբը դիմաւորուեցան ներկաներու յոտնկայս ծափողջոյններով: Ծանօթ երգչուհի Անահիտ Ներսիսեան կատարեց ամերիկեան ու հայկական քայլերգները:

Միութեան Կեդրոնական Վարժութեան նախագահ Տիար Նժդեհ Փիրջանեան արտասանեց բացման խօսքը. ան պատուաբեր նկատեց Վեհափառ Հայրապետին այս այցելութիւնը, զոր որակեց պատմական, յիշեց, թէ Նորին Ս. Օծութիւնը տասնվեց տարիներ առաջ իր առաջին

այցելութիւնը տուած էր միութեան՝ նախկին կեդրոնին մէջ, մաղթած էր յաջողութիւն ու նոր սերունդներուն ծառայութիւն. միութիւնը հաւատարիմ եղած է իր խոստումին ու այսօր, նոր կեդրոնին մէջ նուիրուած է երիտասարդութեան ու մայր հայրենիքի ծառայութեան:

Ակներեւ էր, որ մշակոյթը մեծ բաժին ունի միութեան աշխատանքներուն մէջ, որովհետեւ յայտագիրը գեղազարդուած էր երաժշտական գեղեցիկ ելոյթներով ու ասմունքով:

Միութեան երգչախումբը, արուեստագետ-երաժշտագետ Միքայէլ Աւետիսեանի խմբավարութեամբ, ներկայացուց փունջ մը երգեր՝ «Նոր Յայաստան», «Հայրենիք» եւ «Հայաստան», այլապէս արտայայտելով այս միաւորին սերն ու կապը՝ մայր հայրենիքին հետ: Երիտասարդ Էրիք Ադամեան տպաւորիչ կերպով ասմունքեց Պարոյր Սեւակի «Քիչ ենք, բայց Յայ ենք» բանաստեղծութիւնը: Միութեան շաբաթօրեայ դպրոցի աշակերտները այլ գործնական վկայութիւն մը տուին հայակերտումի գործին մասին, ներկայացնելով ժողովրդական ու տոհմիկ երգեր, խմբավարութեամբ Յերմինէ Թումանեանի: Երգող, ասմունքող թէ խմբավար՝ արժանացան հիւրերուն ու հանդիսականներուն ջերմ գնահատանքին: Նշենք, որ հանդիսավարը՝ Թինա Դամլաքեան, իր ասմունքային ելոյթներով ու դիպուկ միջամտութիւններով ամբողջացուց յայտագիրին համեմները:

Գեղարուեստական յայտագիրէն ետք, խօսք առաւ միութեան ենամակալ Մարմինի նախագահ Տոքթ. Վահան Կրեկըր: Ան ողջունեց Վեհափառ Հայրապետն ու շքախումբի անդամները, ներկայացուցչական դէմքերը, մասնաւորաբար շնորհակալութիւն յայտնելով Առաջնորդ Սրբազանին, որ իրականացուցած էր միութեան փափաքը՝ հայրապետական այս այցելութիւնը: Ան վեր առաւ ներշնչման խթան ըլլալու ու առաջնորդներ իրարու մօտ բերելու Վեհափառ Հայրապետին արժանիքները, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական շրջանակին մէջ առաջնորդողի դերն ու հայութեան դատը միջազգային ընտանիքին ծանօթացնելու գործունեութիւնը: Ան իր խօսքը եզրափակեց բարեմաղթութիւններով, ու հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի ներկայացնէ Վեհափառ Հայրապետը:

Առաջնորդ Սրբազանը գոհունակութեամբ ողջունեց Վեհափառ Հայրապետին շնորհաբեր այցելութիւնը, ու վեր առաւ Իրանահայ Միութեան կեդրոնին ազնիւ առաքելութիւնը, նկատել տալով, որ անիկա հայութեան համար Տուն մըն է, ինչպէս որ Ազգ. Առաջնորդարանը կը նկատուի Ազգի Տուն, իսկ Հայաստանի հիւպատոսարանը՝ Հայաստանի Տուն: Նշելով, որ տուն հասկացութիւնը կը բովանդակէ սիրոյ, գործակցութեան ու սերտ կապի գաղափարները, ան լուսարձակի տակ բերաւ Վեհափառ Հայրապետին հաւատքի, կամքի ու վարակիչ գործի մղիչ ուժ ըլլալու արժանիքները, գնահատանք արձանագրեց հիւրընկալումին ու պատրաստուած գեղեցիկ յայտագիրին մասին, ու հրաւիրեց Վեհափառ Հայրապետը՝ տալու իր պատգամը:

ԻՐԱՆԱԶՅՈՒՆ ԱԻԱՆԴԱՊԱՅՈՒԹԻՒՆԸ

Նորին Ս. Օծութիւնը հայրապետական օրհնութեամբ ողջունեց ներկաները եւ օրհնեց նոր կեդրոնը, համոզում յայտնելով, որ անկախ սոսկական քարտէղէն կառոյց չէ, այլ շնչաւոր կեդրոն մը՝ բարոյական ու մշակութային արժէքներու պահպանման ու փոխանցման իմաստով, շէք մը, որ նաեւ ժողովուրդին ուղղուած առաքելութիւն պիտի ըլլայ, ինչպէս որ է հայկական եկեղեցին:

Ըլլալ իրանահայերու հետ՝ կը նշանակէ ըլլալ Պարսկահայաստանի մէջ, հաստատեց Վեհափառ Հայրապետը ու հանգամանօրէն ու դրուատական արտայայտութիւններով անդրադարձաւ մշակոյթ կերտելու, պահելու, հայերէնին հաւատարիմ, եւ ազգային ժառանգութեանց ու աւանդութեանց կրողը ըլլալու իրանահայերու արժանիքներուն: Ան յայտնեց, թէ ինք բազմիցս այցելած է Իրանի մեր երեք թեմերը, որոնք միայն եկեղեցի կամ ուխտավայր չեն, այլ հայկականութեան՝ պատմութեան, մշակոյթին ու մեր եկեղեցւոյ հաւատարմութիւն մարմնաւորող կեդրոններ: »Ձեր միջոցով Պարսկաստանի հայութիւնն է որ կ'ողջունեմ«, շարունակեց Հայրապետը, նկատելով, որ քիչ առաջ ներկայացուած երգերն ու ասմունքը վկայութիւն են, որ Հայաստանէն հեռու ինկած մեր ժողովուրդը կառչած է իր արմատներէն՝ հայու հոգիին:

Վեհափառ Հայրապետը խօսեցաւ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բազմաճիւղ առաքելութեան մասին, մասնաւորաբար կանգ առնելով հարկադրաբար սփիւռք դարձած հայութեան համար հայրենիքի համազօր կառոյցներ ու արժէքներ պահպանելու անոր պատմական առաքելութեան առջեւ: Ան նշեց, որ ամբողջ սփիւռքի տարածքի, տասնամեակներ շարունակ պահպանուեցան ազատ, անկախ Հայաստանի գաղափարն ու անոր խորհրդանիշ՝ Եռագոյնը, իսկ այժմ, բոլորս պարտականութիւնն է պաշտպան կանգնիլ հայրենիքի ազատութեան, անկախութեան, զօրակցիլ Արցախին, ապահովել հայկական օճախներուն հայօրէն գոյատեւումը: Աւելին, շեշտեց Վեհափառ Հայրապետը, մենք ունինք նահատակներու կտակը իրագործելու առաքելութիւնը. երեք տարի ետք, պիտի նշենք Յեղասպանութեան հարիւրամեակը. անկախ միայն նահատակներն ու կորուստները յիշատակելու հանգրուան պիտի չըլլայ, այլ մեր արդար պահանջներն ու իրաւունքները ուժգնօրէն պիտի դնենք միջազգային ընտանիքին դիմաց, ցեղասպան թուրքէն պիտի պահանջենք մեր իրաւունքները, «որովհետեւ ազատ ու անկախ Հայաստանը պէտք է ըլլայ նաեւ միացեալ Հայաստան, մեր հողային ու ազգային բոլոր իրաւունքներուն կենսագործումով՝ պիտի պայքարինք հասնելու Մեծ Հայաստանին», շեշտեց Նորին Ս. Օծութիւնը: Ան կարեւորութեամբ ընդգծեց այս պայքարին մէջ միասնականութեան հրամայականը, ուր Հայաստանի, Ղարաբաղի ու Սփիւռքի կամքերը պիտի մէկտեղուին: «Վերանորոգենք մեր ուխտը ու քալենք ազգի իրաւունքներուն ու հայրենիքի հզօրացման ճամբով», եզրափակեց Վեհափառ Հայրապետը, միաժամանակ դրուատելով իրանահայութեան մասնակիցի դերը՝ այս առաջադրանքներուն իրականացման մէջ:

Չեղարուեստով ու ազգային պահանջատիրութեան ոգիով յագեցած երեկոն կը մօտենար իր վախճանին: Առաջնորդ Սրբազանը յայտնեց, է Վեհափառ Հայրապետը յուշանուէր մը բերած է Անթիլիասէն, «Բարձր բերդի

Աւետարան»ի մէկ էջին մանրանկարը, զոր յանձնեց միութեան ներկայացուցիչներուն:

Յնչեց «Ի վեհ Բարձանց»ը, ապա հայրապետական շքախումբը դուրս եկաւ սրահէն ու միութեան ներկայացուցիչներուն կողմէ առաջնորդուեցաւ շէնքի տարբեր բաժինները, որոնք դարձած են մեղուաջան աշխատանքի ու հայկականութեան հնոց: Շրջապտոյտէն ետք, Վեհափառ Հայրապետին ու հիւրերուն համար կազմակերպուած էր պատշաճ հիւրասիրութիւն:

## **A CULTURAL EVENING IN HONOR OF HIS HOLINESS ORGANIZED BY THE ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES**

On the evening of Tuesday, October 18, 2011, a reception was held in honor of His Holiness Catholicos Aram I at the headquarters of the Armenian Society of Los Angeles. The hall was filled with over five hundred guests who had come to honor His Holiness.

Upon his arrival at the center, His Holiness, accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was welcomed by the Board and members of the organization. At the entrance, His Holiness conducted the traditional blessing of salt and bread, followed by the Blessing of the Home service.

The program began with the national anthems of the U.S. and Armenia by singer Anahit Nercisyan.

Welcoming remarks were delivered by Board of Directors Chair Mr. Njdeh Pirjanian who spoke of the visit of His Holiness as a historic event. He noted how sixteen years earlier His Holiness had visited the previous center of the organization where he had wished them success in their service. He stated that the organization members had committed to that pledge and today, in their new center, they continue their service to the youth and community. It was apparent that preserving the Armenian culture is a major focus of the organization's mission, as the evening was filled with a beautiful program of songs and recitations.

The organization's choir, led by Mikayel Avedissian, presented a number of songs, a young member of the organization Eric Atamian beautifully recited Barouyr Sevag's "We are few, but we are Armenian", and Saturday School students performed a number of traditional songs led by Hermine Toumanian. Master of Ceremonies Tina Tamlakian also participated in the cultural program with recitations. All of the performances were met with great applause by the audience.

Following the cultural program, remarks were delivered by Board of Trustees Chair Dr. Vaughn Gregor welcomed the guests, and expressed thanks to His Holiness and the Prelate for facilitating and accepting their request to honor the Pontiff at their center. He referred to His Holiness as a source of inspiration, and lauded his leadership in ecumenical affairs and as an advocate of the Armenian Cause and rights in the international arena. He conveyed his well wishes to His Holiness, and invited the Prelate for his remarks.

The Prelate commended the noble mission of the Armenian Society of Los Angeles and their work in establishing this home for the community, a place that fosters the virtues of love and harmonious collaboration. He thanked for organizing and hosting the evening and the beautifully prepared program, and invited His Holiness for his message.

His Holiness greeted the guests and blessed the new center, stating that it not merely a physical structure, rather a living center with spirit where ethical and cultural values are preserved and fostered which serves the people, just as the Armenian Church does. He spoke of the Iran-Armenian population as people who preserve and instill the Armenian culture, are faithful to the Armenian language, and are propagators of our national values and heritage. His Holiness stated that he has visited the three Dioceses of Iran numerous times and noted that they are the embodiment of our history, culture, and church. He also stated that the program they had prepared is a testament to the fact that although we are physically far from Armenia, we are rooted in the Armenian spirit.

Speaking on the multi-faceted mission of the Catholicosate of Cilicia, His Holiness specifically its role in the Diaspora. His Holiness noted that for decades, Armenian Diaspora communities kept alive the spirit of a free and independent Armenia and its symbol, our tri-color flag, and now, it is the responsibility of all to safeguard the freedom and independence of Armenia, to support Artsakh, to maintain the Armenian-ness of our institutions. Furthermore, we have a responsibility to carry out the will of our martyrs. In three years, we will be commemorating the centennial of the Armenian Genocide; alongside honoring the memory of our martyrs, we must bring our cause to the attention of the world and demand our rights because "a free and independent Armenian must also be a united Armenia...we will rally for a Greater Armenia", stressed His Holiness, who also reflected on the importance of unity in this regard with the combined spirit of Armenia, Karabakh, and the Diaspora. In conclusion, His Holiness called for the renewal of our pledges as we continue our path to securing our rights and strengthening our homeland.

As the program was drawing to a close, the Prelate announced that His Holiness had brought a memento from Antelias, a reproduction of one of the pages of the ancient "Partser Pert" Gospel, which he presented to them.

With the singing of the Pontifical anthem, His Holiness was led out of the hall and toured the various departments of the center. A reception in his honor followed.